

ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻ 52-ՐԴ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

1979 թվականի մայիսի 4 և 5 օրերին Ռիտլի քաղաքի (Կալիֆոռնիա) ս. Սահակ-Մեսրոպ եկեղեցում գումարվել է Հյուսիսային Ամերիկայի արևմտյան թեմի 52-րդ թեմական պատգամավորական ժողովը՝ նախագահությամբ թեմական առաջնորդ տ. Վաչե արքեպ. Հովսեփյանի:

Թեմական պատգամավորական ժողովի օրակարգի վրա եղել են հետևյալ հարցերը. թեմական խորհուրդ, շրջանային ժողովներ, առաջնորդարանի ձեռնարկներ, թղթակցություն Մայր Աթոռի հետ, հոգևորականության պատրաստվող ուսանողներ, թեմական կալվածների, նոր գնումների և շինությունների ծավալում, թեմական կազմակերպություններ, կիրակնօրյա դպրոց, հայ լեզվի ամենօրյա դպրոց, առաջնորդարանի հանձնաժողովներ, Մայր եկեղեցու հրատարակություն (1979 թվականի հունվարից սկսած հրատարակվում է թեմի պաշտոնաթերթ «Մայր եկեղեցին» ամսագիրը), այցելություններ Կալիֆոռնիայի թեմին: Օրակարգի վրա դրված հարցերի շուրջ ժողովը ընդունել է համապատասխան որոշումներ:

Այսօր Կալիֆոռնիայի հայոց թեմում կան 16 եկեղեցիներ կամ եկեղեցական ծխեր՝ իրենց հոգևոր հովիվներով և այցելու եկեղեցականներով:

Թեմական պատգամավորական ժողովը իր աշխատանքները ավարտելուց հետո ժողովի իր ատենագրության մեջ արձանագրել է որպես «Եզրափակում» հետևյալը.

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Սրբազնագույն Հայրապետը անցնող 23 տարիներու ընթացքին որպես Հովվապետ առաջնորդեց Հայց. եկեղեցին: Իր խղճամիտ ու նվիրյալ առաջնորդության ներքն Մայր Աթոռ ս. Էջմիածինը ամբողջությամբ նորոգվելով պայծառացավ: Ներկայիս ավելի քան 50 երիտասարդներ կուսանին հոգևոր ճեմարանին մեջ, և բազմաթիվ կրոնական գիրքեր հրատարակվեցան Վեհափառի օրով:

Վեհափառ Հայրապետի ծննդյան յոթանասունամյակի առթիվ կհայտնենք թեմական ժողովի սերն ու հավատարմությունը ու նաև համայն ժողովուրդին: Թող ամենակալն Աստված պարգևե Հայոց Հայրապետին առողջություն հովվելու Իր հոտը ու նաև իրականացնելու աստվածահաճո Իր ծրագիրները:

Ի դիմաց թեմական խորհուրդի՝

ՎԱՉԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Առաջնորդ և նախագահ թեմական խորհուրդի

ՀԱԿՈԲ ՂԱԶԱՆՇՅԱՆ
Ատենապետ

ՀՈԳԾ. Տ. ՄՈՒՇԵՂ ՎՐԴ. ԹԱՇՇՅԱՆ
Ատենադպիր